Մեծ է կըշռով խօսիլըն
մէկին ի մէջ բազմաց,
Որ խելօքըն լոյս ծագեալ
վարատէ զխաւար ի մըտաց,
Եւ իմաստութեան խելքըն
ցուցանէ բանիւ լըսօղաց.
Ապա ով ըզսէրն ունի,
որ լրումն է պատուիրանաց:

Ով ոք որ ի զուր հոգոց
'ւ յանցաւոր իրաց կայ ի բաց,
Զինչ ոսկի խալաս է նա
որ զատի ի չորս տարերաց.
Եւ այլ թէ հոգւով լըսէ
ու խօսք իր մի ի խելաց,
Ի վեր քան զերկիր է նա
եւ նրման է լուսեղինաց:

Ով ոք մ'որ սիրոյն ըզբոցն
ի սրտին ի վառման ունի,
Հաւէտ նա ու ջուր ուղէ,
յայն ի պահն յինչ ակնէ լինի:
Այս բանս ի յամէն մարդէ,
հետ ամէն սըրտից կու կըշռի,
Զի ընդ հոգեւոր սիրոյն
շատ մարմնոյ սէր կու խառընի:

Ես շատ եմ յարմացք ցնացել,
թէ խելօքն ինչ ցեղ կու խարի.
Իրք մի որ ջօհար ասի
եւ ապատ յայլ իրք չիառնի,
Ամ հանց գիտացէք ըզնա,
որ ամէն մարդոյ չհասնի.
Բայց թէ որ յըստակ մըտօք
ի Քրիստոս ուղիղ դաւանի:

34 ով որ չունի ոք... հոգոց... կա: — 36 թէ ու խօսի էլաց: — 38 ով ոք մոր: — 39 հառաչէ... յան ի պահն: — 40 ամէն. չունի կու: — 44 դիտաք:

ՕՏԱՐ ԲԱՌԵՐ

Անթարթիպ. ա. թէրթիպ, կարգ, ուստի «անկարգ»:
Բէսիֆաթ. պ. ա. բէ + սիֆաթ, ան-որակելի, ան-նկարագիր:
Խալաս. ա. խասս, խալիս, գուտ, անխառն:
Հասրաթ. ա. անձուկ, կարօտութիւն:
Ղամազ. ա. զամազ, քսու, բանսարկու, մատնիչ:
Ղէմին. պ. զամին, զամաւ. թաքնեալ, տառապեալ:
Շէջլ. ա. ձեւ, կերպարանք:
Շիւա. պ. ճարտարախօսութիւն:
Ջօհար. պ. գոհար:
Սուրաթ. ա. երես:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

ԵՌԹԻՒ ԶԱԼԱԹԻՍՅԻ Ս. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՁԻՆՈՒԹԵԱՆ

(1389)

Այս Օրհնութեան գիրը երեւան հանեցի Նիկոսիայի Հայոց Եկեղեցւոյ Առաջնորդարանին մէջ պահուած Թ. 55 Ժողովածոյ ձեռագրին մէջ, թղ. 198ա—200ա, իբր ԺԴ. դարէ: Գրուածքս ձեռագրին մէջ խորագիր չունէր:

Տրուած է Օրհնութեան գիրս 1389ին, Զալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն շինութենէն ետքը, յայտնելու համար շնորհակալութիւն մատնաւորապէս այն ամէն մեծ եւ փոքր վաճառականներու եւ ընդհանրապէս ժողովուրդին, որոնք նպաստամատոյց եղած են նուէրներով Եկեղեցւոյ շինութեան: Դժբախտաբար գիրս գրողին ստորագրութիւնը չէ պահած, Եկեղեցւոյ այն առաջնորդին, որ հանած է շրջաբերականս:

Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ շինութեան շուրջը կային հրապարակի վրայ անապատոյն ժամանակներէ այլ եւ այլ իրար հակասող յիշատակագրութիւններ: Պիտի ներկայացնեմ զանոնք հոս, անոնց արժէքը միանգամ ընդ միշտ գնահատելու համար.

1. *Բարգէն Վ. Կիւլէսէրեան*[1] *հրատարակեց Արմաշի ձեռագրէ մը Եկեղեցւոյս շինութեան հայող յիշատակարանս, գրուած կամ օրինակուած 1769ին.*

«Ի թուին Փրկչին 1391, ի հայրապետութեան Տեառն Թէոդորոսի, ոմն վաճառական Կոդմ(ա)ս անուն Կաֆայէ եկեալ ի Կոստանդնուպոլիս, որ էր ընդ իշխանութեամբ Յունաց, հրաման տուեալ շինելոյ զեկեղեցի մի ի Զալաթիա, կոչելով զանունն Սուրբ Լուսաւորիչ: Եւ զմատուռ Ս. Խաչին Աւետ ոմն զարբին շինեաց»: Այս տողերը կը գտնուին նաեւ Անտոնեան Հարց Մատենադարանի Թ. 229 ձեռագրին մէջ (այժմ ի Զմմառ): Ընթերցուածի տարբերութիւնք են. «Թիոդորոսի». «Կոմս» (փոխ. Կոդմասի). աւեր (փոխ. Աւետ):

2. *Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն ճակատին քանդակուած է Արձանագրութիւնս*[2].

Տաճար Աստուծոյ: Ի սկզբան կառուցաւ սուրբ տաճարս յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչի մերոյ ի հայրապետութեան Հայոց Տ. Թէոդորոսի սրբազան կաթուղիկոսի եւ ի պատրիարքութեան սրբոյ Երուսաղէմի Տ. Եսայեայ արքեպիսկոպոսի առաջնոյ, գնեալ տեղիս սրբոյ տաճարիս ի ձենովացւոց Կոմս անուն բարեպաշտ վաճառականի ուրումն Քէֆի քաղաքին Ղրիմու, յամի Տեառն 1436:

3. *Երեմիա Զէյէպի Քէօմիւրճեան († 1695) կը գրէ իր Ստամպօլոյ պատմութեան մէջ*[3]*, Զ. տող 195—198.*

Զեկեղեցի Լուսաւորչին ուխտիցուք զՀայոց սովորարան.
Զոսա չինեն Կաֆայեցի պազիրկանքն յանուն[4] *նախնական.*
Որոց մասն ի լեհ անկեալ 'ւ ի Ստամպօլ տեղացիք կոչման.
Թիւն ութն հարիւր ութսուն հինգ, ընդ Յունաց տիրապետութեան:

4. *Հ. Ղ. Ինճիճեան*[5]*, յայտնի չէ ինչ աղբիւրէ, կը հաղորդէ.*

Ի Զալաթիա «մի եկեղեցի է Հայոց, զոր նախ առաջին չինեաց Կոմս անուն վաճառական ոմն. որոյ եկեալ ի Քէֆէ քաղաքէն Գրիրմու ի Ստամպօլ ի 1391, ի կաթողիկոսութեան տեառն Թէոդորոսի, էառ տեղի ի ձենովացւոց ի Զալաղա քաղաքի, եւ անդ ի թուականիս (1436) կառոյց զայս եկեղեցի յանուն սրբոյ Լուսաւորչի: Իսկ զարբին ոմն Աւետ անուն կառոյց զսեղան սրբոյ Խաչին որ առ նովաւ»:

5. *Սարգիս զպիր Սարաֆ Յովհաննէսեան այսպէս կ'ամփոփէ իր ձեռք բերած տեղեկութիւնները*[6]*.*

«Եւ առ նմին է Եկեղեցին Հայոց յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին. զոր ստացեալ է ազգ մեր ի թուականին Հայոց ՊՁԵ եւ յամի Տեառն 1436: Եւ չինեալ է զսա Կոմս անուն իշխան ոմն եկեալ ի Կաֆա քաղաքէ ցամաքակղզւոյն Գրրոմու, յորժամ էր քաղաքն Զալաղա ընդ իշխանութեամբ ձէնովացւոց: Զորոյ զմատուռն, որ յանուն Ս. Խաչին, չինեալ է զարբին ոմն Աւետ: Եւ այս պատահեաց յայն ժամանակի մինչդեռ Կ. Պոլիս էր ի ձեռն Յունաց ԺԸ ամօք յառաջ քան զառումն նորին ի Տաճկաց»:

Կարեւոր յիշատակարան մ'է Արմաշի ձեռագրին աւանդածը, անկախ միւսներէն: Յիշատակագիրը քաղած ըլլալու է իր ծանօթութիւնները Եկեղեցւոյն ճակատը գտնուած արձանագրութենէ մը, եւ այս 1436էն յառաջ: Այն տեղ կարդացած ըլլալու է Կոդմս (Կոմս) անունը եւ «ի թուին Փրկչին 1391», ինչպէս նաեւ զարբին Աւետի յիշատակութիւնը: Արձանագրութեան մէջ պէտք է եղած ըլլայ նաեւ Հայ տոմարին թուականը, զոր զանց առած է յիշատակել: Իր ձեռք բերած տեղեկութիւնները հարազատ աղբիւրէ են:

Արձանագրութիւնը շարադրողը ունեցած է աչքի առաջ հնագոյն արձանագրութիւնը, արդէն դժուարընթեռնելի. «Կոդմասը» որ արձանագրութեան մէջ հաւանօրէն փակագիր էր, ճշդիւ կարդացած է «Կոմս»: Թուականը կամ անընթեռնելի եղած է եւ կամ զիտմամբ դուրս ձգուած: Կը սպասուէր, որ «եւ ի պատրիարգութեան...» բառերէն յառաջ արձանագրուած ըլլար «եւ այժմ նորոգեցաւ». այսպէս միայն կրնար արդարանալ Եսայի արքեպիսկոպոսի յիշատակութիւնը 1436ին տեղի ունեցած նորոգութեան արձանագրութեան մէջ: Ճշդիւ Եսայի Ա. 1436 Կ. Պոլիս կը գտնուէր[7]*:*

Երեմիա Զէյէպի ծանօթ է 1436ի արձանագրութեան: Իսկ Ինճիճեան կ'երեւայ թէ ունէր ձեռքին թէ՛ Արմաշի ձեռագրին վերոյիշեալ հատուածն եւ թէ՛ 1436ի Արձանագրութեան պատճենը. փորձած է այս երկուքէն խառնուրդ մը կազմել: Սարաֆ Յովհաննէսեան հիմնուած է Արձանագրութեան վրայ. իր ծանօթութիւնը Աւետ զարբինի չինած մատուռի մասին քաղած է վերոյիշեալ յիշատակարանէն:

Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ շինութեան ճիշդ թուականը պահած է մեզի Օրհնու-

[1] Կոլոտ Յովհաննէս պատրիարք. Վիեննա 1904, էջ 110:

[2] Կիւլէսէրեան, անդ, 124—125: Դկտ. Վ. Թորգոմեան, Երեմիա Զէյէպի, Բ. էջ 480:

[3] Հրտ. Դկտ. Վ. Թորգոմեան, Վիեննա 1913, էջ 74: Հմմտ. նոյն, հատոր Բ. անդ, 1932, էջ 475—477:

[4] Թորգոմեան, Բ. 476 կ'ուզէ «յանուն»ը «Յանուց», ինչպէս ունին Երուսաղէմի եւ Էջմիածնի օրինակները:

[5] Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Հատոր Ե. Վենետիկ 1802, էջ 183:

[6] Դկտ. Վ. Թորգոմեան, Ստամպօլոյ Պատմութիւն, Բ. էջ 479:

[7] Եսայի Ա. պատրիարք աթոռակիցն էր Մարտիրոս պատրիարքին: Իրմէ յառաջ ուրիշ Եսայի պատրիարք չէ եղած Երուսաղէմ, գոնէ յանուանէ չէ յիշուած պատմութեան մէջ: Հմմտ. Հ. Ա. Պալճեան, Պատմութիւն կաթ. վարդապետութեան ի Հայս. Վիեննա 1878, էջ 80—90. Մկրտիչ եպ. Ադաւնունի, Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղէմի. Երուսաղէմ 1929, էջ 127—130:

© National Library of Armenia

թեան դիրը· «Ի ծննդենէ կենարարին մարմնովն՝ Քրիստոսի Աստուծոյ մերոյ 1391 ամին եւ ի Հայոց մեծաց թվին ՊԼԸ· ամի եւ ի հայրապետութեան տեառն Թէոդորոսի եւ երեսփոխանութեան տէր Յովհաննէսի ամենայն Ուռուսաց եւ Վլախաց աշխարհի եղեւ սկիզբն շինութեան սրբոյ Լուսաւորչին ի Ղալաթիա, որ յանուն սուրբ Գրիգոր Հայոց մեծաց հայրապետի, ձեռնատու եւ աւժանդակ լինելով մերոյին սեռիս Հայոց վաճառականք: Որք եկեալ ի աստուածապահ քաղաքս ի Ղալաթիայս եւ տեսեալ զսուրբ աստուածարնակ տաճարս որ յանուն սուրբ Լուսաւորչին չինեալ եւ չինելոց եւս է կաթուղիկէ եկեղեցի, նա մեծաւ փափաքմամբ եւ քաջայորդոր յուսով եւ սիրով ձեռնտու աւգնական եղեւ»:

Քրիչական թուականը 1391 Եւսեբիոս Կեսարացւոյ ժամանակագրութեան համաձայն գրուած է, որ շեղելով ընկալեալ թուականէն (մուծուած Դիոնեսիոս Փոքրէն) Քրիստոսի ծնունդը ըստ ուղիղ հաշուին կը դնէ 2 տարի յառաջ[8]· ուստի 1391 նուազ 2 կը տանանք 1389, համապատասխան Հայոց ՊԼԸ տարւոյն, որ է 1389: Այս 1391 տարին պահած է անփոփոխ Արմաշի ձեռագիրը: Թէոդորոս Բ· կաթողիկոս գահակալած է 1381 Յունուար 1էն մինչեւ 1393: Իսկ Յովհաննէս կաթողիկոսական երեսփոխան կարդուեցաւ սոյն 1389 թուին: Օրհնութեան դիրս, որ ուղղուած է բոլոր բարեբար հաւատացեալներու, զգուշացած է, ինչպէս կ'երեւայ, մանաւորներն յանուանէ անուանել· այս պատճառաւ չէ յիշուած մեծ բարեբար Կոմս վաճառականը: Եկեղեցին, որ ի հիմանց նոր չինուած է, կ'ենթադրէ տեղւոյն վրայ համանուն տաճար մը, որ քանդուած է:

Կը ներկայացնեմ ընթերցողներուս Օրհնութեան դիրս ամբողջութեամբ, ուղղելով աչքի դարնող ազաւաղումներն եւ ուղղագրական խոտորումները· բնագրին ընթերցուածները նշանակած եմ ստորին լուսանցքի վրայ:

---

8 Մարկոս գրիչ 1388ին գրած է իր յիշատակարանը «ի թուականութեանն ի ծննդենէն Քրիստոսի ըստ Հայոց հաշուի 1390 եւ ըստ Յունաց 1396· եւ ըստ Ֆռանգաց 1388· եւ ըստ Ասորւոց ՌՃՀԺԱ (!)· եւ արեգական ստուարիս Հայոց ՊԼԷ» (1388), ի վերարար ամսոյ ԻԹ նահանջի ամի» (Ձեռ. Երեւանի, թ. 59):

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

ԱՌԹԻՒ ՇԻՆՈՒԹԵԱՆ Ս· ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ի Կ· ՊՈԼԻՍ (1389)

Այէ ոմն առաջին աստուածաբանիցն, եթէ «զաստուածային բանս ի յԱստուած վստահանալ պարտ է եւ զմարդկայինս ի մարդիկ», մանաւանդ թէ զմարդկային բան եւ գործ ըստ այմ աւրինակի վստահանալով յԱստուած եւ ամենայն սրբոց նորա հիմն սրբոյ տաճարին, վասն զի աստուածային է եւ յաղագս Աստուծոյ:

Ի ծննդենէ կենարարին մարմնովն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ՌԳՃՂԱ (1391) ամին եւ ի Հայոց մեծաց թվին ՊԼԸ (1389) ամի եւ ի հայրապետութեան Տեառն Թէոդորոսի եւ երեսփոխանութեան տէր Յովհաննէսի արքեպիսկոպոսի ամենայն Ուռուսաց եւ Վլախաց աշխարհի, եղեւ սկիզբն շինութեան սրբոյ Լուսաւորչին ի Ղալաթիա, որ յանուն սուրբ Գրիգոր Հայոց մեծաց հայրապետի, ձեռնատու եւ աւժանդակ լինելով մերոյին սեռիս Հայոց վաճառականաց աստուածապահ քաղաքին Կաֆային եւ այլոց աշխարհականաց եւ քաղաքաց եւս վաճառականք: Որք եկեալ ի յաստուածապահ քաղաքս ի Ղալաթիայս եւ տեսեալ զսուրբ աստուածարնակ տաճարս որ յանուն սուրբ Լուսաւորչին չինեալ եւ չինելոց եւս է կաթողիկէ եկեղեցի· նա մեծաւ փափաքմամբ եւ քաջայորդոր յուսով եւ սիրով ձեռնտու աւգնական եղեւ:

Նա արարիչն Աստուած Հայրն ամենակալ, Որդին միածին եւ սուրբ Հոգին ճշմարիտ աւրհնեսցէ զնոսա, հատուսցէ նոցա փոխարէն իւր միւսանգամ դալստեան բիւրապատիկ եւ հազարապատիկ եւ հարիւրապատիկ: Այլ եւ իշխանն ամենայնի Քրիստոս եւ իշխանարարն ամենայն իշխանաց աւրհնեսցէ զբարեպաշտ Կումին[9] այսմ քաղաքիս բոլոր պուրջեսնով[10] եւ ամենայն գաւրաւք հնազանդեցելովք· զոն անեղին եւ բազուկն անմահ հզաւրին հովանի եւ պատսպան լիցի նոցա· եւ եղիցի նոցա պարիսպ չուրջանակի հրեղինացն խմբիւ եւ ամենահսկեաց աչքն Աստուծոյ հանապազ տեսանէ զնոսա քաղցրութեամբ· այլ եւ քաղաքն եւ դեղեանք որ ընդ ձեռամբ նոցա են, ամենայն խռովութիւնք բարձցին եւ խաղաղութիւն հաստատեսցի յայս քաղաքս· եւ ամենայն ուրախութիւն տնկեսցի ի սա: Այլ եւ ինքն որ գլուխ է եկեղեցեաց՝ Քրիստոս Աստուած եւ վասն անեզրական բարերարութեան եւ արարչական գթութեան հաստատեաց զեկեղեցի ի վերայ առաքելական եւ մարգարէական վիմի· ոչ որպէս զշինուածն հրէական գլուրաքակ եւ վաղափուլ, զոր եւ ինքն Տէրն ամբաստանէ սրբովք մարգարէիւք, այլ որպէս վայելէ աստուածարկու հիման եւ անձեռագործ տաճարի ըստ մարգարէութեան աստուածահաւր մարգարէին Դաւթի, թէ «Աստուած հիմունս արկ նմա յաւիտեան[11]· եւ թէ «Տէր ով կացցէ ի խորանի քում[12]»:

Նոյն ինքն Աստուած բանն պահեսցէ զայս եկեղեցի, որ յանուն սուրբ Լուսաւորչի չինեցաւ, եւ տացէ սմա չինութիւն եւ յանկ ելանել որպէս զսուրբ Կաթուղիկէ եկեղեցի: Երդ երգեցողաց, ձայն պաղատանաց, բուրուքն խնկոց, լուցումն լապտեանաց, բուրումն ջրոց եւ ջահից, նուէրք աղաւթից եւ պարտարագաց եւ քարոզութիւնք վարդապետաց ի դրանէ սորա մի պակասեսցի մինչեւ ի գալուստն կենարար Բանին Աստուծոյ: Այլ եւ որք սպասաւորեն սմա՝ քահանայք, սարկաւագունք եւ կղերիկոսք եւ ժամահարք եւ այլ ամենայն ժողովուրդք այսմ եկեղեցւոյ ազաւթք եւ երկրպագութիւնս մատուցանէ եւ ողորմութիւն՝ վարձս բարեաց ընկալցի նա:

Այլ սրբասէր քահանայք եւ քրիստոսասէր եւ բարեպաշտ տանուտէրք եւ վաճառականք եւ ձեռնահմուտ արուեստաւորք, արք եւ կանայք, ծերք եւ տղայք, երիտասարդք եւ կուսանք, որք եղեն պատճառս շինութեան այսմ սուրբ եկեղեցւոյ· եւ աւգնական են լեալ եւ որ լինելոց են առաջինք, միջինք, վերջինք, որ ոք դրամով եւ որք զդեստիւ եւ այլք դրաւք· որ ոք տուեալ են եւ որ ոք տալոց են, այս կեանքս հարիւրապատիկ առցեն զվարձս հոգւոյս եւ մարմնաւոր· եւ ի հանդերձեալ աշխարհին զհազարապատիկ եւ զբիւրապատիկս առցեն ընդ սուրբս ամենայն· եւ լսեն ի Տեառնէ զերանաւէտ բարբառն որ ասէ· Եկայք աւրհնեալք Հօր իմոյ[13]· եւ բարձցէ ի նոցանէ զամենայն ցասումն եւ զտարաժամ մահն, տացէ նոցա չինութիւն անդորրութիւն եւ խաղաղութիւն եւ ամենայն բարեաց լիութիւն եւ առատութիւն· եւ ամենայն ճանապարհս ուր եւ երթայցեն, յաջողեսցէ նոցա, ի նստել ի տան, ի գնալ ի ճանապարհի, ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սատանեսցին, այլ եւ ննջեցեալքն՝ քահանայք եւ ժողովրդականք, որ ողորմութիւն են արարեալ սուրբ Եկեղեցւոյս, եւ ընդ հովանեաւ սորա հանգուցեալ կան, Հոգին Աստուած հանգիցէ ի հոգիս նոցա, ցաւղն ողորմութեան վերացաւղեսցէ ի վերայ տատացեալ մարմնս (!) նոցա առ ի բուսուցանել յաւուրն վերջին· եւ կատարումն ազաւթից եւ վերընծայութիւն աստուածային անծախելի պատարագս եղիցի հաշտութիւն նոցա առաջի երկնաւոր Հաւրն Աստուծոյ մերոյ եւ նմա փառք յաւիտեանս· ամէն: Եւ վերոյիշեալք ամենայն աւրինութեանց արժանաւորք քահանայք եւ ժողովուրդք, երիտասարդք սուրբ եկեղեցւոյս այսորիկ:

Հ· Ն· ԱԿԻՆԵԱՆ

ՁԵՌԱԳՐԻՆ ԸՆԹԵՐՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1 աստուածպրանիցն: — 2 աստուած: — 6 աստուած: — 8 ազգս: — 12 հայրապետութեան: — 13 երիցփոխանութեան: Յովհաննէսի: — 16 զալաթիայ: — 17 անուն: — 18 ձեռնատու: — 19 վաճառականաց: — 20 աստուածապահ: — 21 աշխարհականաց: — 22 ի աստուածապահ: — 24 աստուածպրնակ· անուն: — 26 կաթուղիկէ: նոյ: — 27 քաջայ յորդոր: — 29 նոյ: ամենայնակալ: — 32 բիւրապատիկ: — 33 հազարապատիկ: հարիւրապատիկ:

---

9 Կ'ակնարկէ հաւանօրէն Բիւզանդիոնի կայսրը Յովհաննէս Ե· Կանտակուզենոս (1379—1391): «Կումի» ինձ անծանօթ բառ:

40 պահապան: — 42 ամենայնայնոյ: — 44 քաղաքն եւ դեղեակք: ընդ չիք: — 45 բարձին: — 46 հաստատեսցին: այս: — 47 տնկեսցին: — 49 անեզրական: — 50 արարչական: — 53 զիւրապատիկ: — 54 վաղապիսուլ: — 56 անձեռագործ: — 59 նմայ: — 60 կացէ: — 62 անուն: — 63 սմայ: — 64 անկ: — 65 կաթուղիկէ: — 68 վարդապետաց: — 71 ընպայաւորեն սմայ: — 73 ժամապահք: — 74 եկեղեցայ:

---

10 Բառս «պուրջեսնով» կ'ենթադրէ պուրժես-ին յոգ... ուղղականը, համաձայն է լատ. burgenses, իտալ. borgese, ֆր. bourgeois մէջ. հայ. պուրթէս «քաղաքացի» (հմմտ. Աճառեան, Արմատ. Բառարան, Ե, 1137): Առաջին անգամ այստեղ գործածուած պուրթէզ ձեւը:

11 Սղմ. Խէ· 9:

12 Սղմ. ԺԴ. 1:

75 մատուցանեմ: — 77 սրբասէր· քրիստոսասէր: — 79 ձեռնահմուտ արուեստաւորք: — 82 տղայք: եկեղեցայ: — 87 հարիւրապատիկ· հազարապատիկ եւ մարմնաւոր: — 89 զհազարապատիկ եւ զբիւրապատիկս: — 91 բառբառն: — 92 բարձէ: — 93 տապարժամ: — 99 առնել: — 102 եկեղեցայս: — 104 զհոգին: — 110 երկնաւոր: — 112 վերոյ յիշեալք: — 113 արժանաւորք:

---

13 Մատթ. Իե· 34:

© National Library of Armenia